ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 32

«12» 03 2021 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2021 թվականի փետրվարի 26-ի նիստում քննարկել է Հայաստանի Հանրապետության դատախազության 2020 թվականի աշխատանքի արդյունքները և ընդունել համապատասխան որոշում, որի կենսագործումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2021 թվականի փետրվարի 26-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (26.02.2021թ. նիստի N 1 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ նրանց հանձնարարված ոլորտների:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2021 թվականի փետրվարի 26-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Մասնակցում էին
կոլեգիայի անդամներ՝ Հ.Ասլանյանը, Վ.Հարությունյանը, Ա. Աֆանդյանը, Գ. Բաղդասարյանը, Ս. Գալյանը, Ս. Հովհաննիսյանը, Վ. Ջանազյանը, Ա. Հարությունյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Սիմոնյանը, Կ. Բիշարյանը, Ա.Փանոսյանը, Ա. Չախոյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա.Մարուխյանը, Վ.Դաֆայելյանը, Լ. Չարխիֆալակյանը, Ե.Ավագյանը, Ս. Ամիրխանյանը:

Ներկա էին՝ Արցախի Հանրապետության գլխավոր դատախազ Գ. Ներսիսյանը, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներ Կ. Կարապետյանը, Ա. Ժամկոչյանը, ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Ա. Մարգարյանը, ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ զինվորական կենտրոնական բաժինների պետերը, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության դատախազության 2020թ. աշխատանքի արդյունքների ամփոփումը:
2. Դատախազների երդման արարողություն:

Զեկուցողներ՝
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա.Աֆանդյան, Հ.Ասլանյան, Գ. Բաղդասարյան:

Լսեցին՝ Ա.Աֆանդյանին, Հ. Ասլանյանին, Գ. Բաղդասարյանին:
Արտահայտվեց՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ Ա. Աֆանդյանի, Հ.Ասլանյանի և Գ. Բաղդասարյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2020 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ համակարգի մարմինները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել հանրապետությունում օրինականությունը պահպանելու և հանցավորության դեմ համակարգված ու արդյունավետ պայքար

կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

2020թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 26.468 դեպք, նախորդ տարվա 26.850 դիմաց, որոնցից 13.892-ը կամ 52,5 %-ը՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն նվազել են 382-ով կամ 1.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում դեպքերը նվազել են 1069-ով, կամ 7.1 %-ով:

Հանցագործության դեպքերի նվազմանը զուգահեռ 2,3%-ով նվազել է դրանց բացահայտման ընդհանուր ցուցանիշը՝ 55,7% նախորդ 58%-ի դիմաց:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ հանցագործության դեպքերի նվազումը հիմնականում պայմանավորված է սեփականության դեմ ուղղված հանցագործության դեպքերի նվազմամբ:

Արձանագրվել է առանձնապես ծանր հանցագործության դեպքերի աճ 12-ով կամ 4.2%-ով՝ 296 դեպք /նախորդ տարվա 284-ի դիմաց/, բացահայտումը կազմել է 54,9%: Վերլուծություններն վկայում են, որ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի աճը պայմանավորված է սպանության, սպանության փորձերի և թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի ավելացմամբ:

Սակայն ծանր հանցագործության դեպքերը նվազել են 413-ով, կամ 9.2 %-ով՝ 4077 դեպք նախորդ տարվա 4490 դիմաց, բացահայտման տոկոսը կազմել է 35,3%: Պարզվել է, որ ծանր հանցագործությունների դեպքերի նվազումը պայմանավորված է հիմնականում բնակարանային գողությունների դեպքերի կտրուկ նվազմամբ:

Միջին ծանրության դեպքերի շարժընթացում էական փոխոխություններ չեն գրանցվել՝ 7466 դեպք, նախորդի 7463 դիմաց/, բացահայտման կազմել է 42,8%:

Ըստ առանձին հանցատեսակների՝ հանցագործությունների շարժընթացն ունի հետևյալ պատկերը.

<u>Մարդու դեմ ուղղված հանցագործություններ</u> - 2020 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 4410 դեպք, որից 1763-ը կամ 40 %-ը՝ Երևան քաղաքում, իսկ 2647-ը կամ 60 %-ը՝ ՀՀ մարզերում, դեպքերն աճել են 117-ով կամ 2.7 %-ով, ինչը, ընդհանուր հանցավորության նվազման ֆոնի վրա, բացասական ցուցանիշ է:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ աճը, ի թիվս այլ հանցատեսակների, ապահովվել է նաև սպանության և սպանության փորձի դեպքերի հաշվին: Այսպես՝ սպանության դեպքերն աճել են 3-ով կամ 6.4 %-ով /47-50/, իսկ սպանության փորձի դեպքերը՝ 9-ով կամ 30 %-ով /30-39/:

2020 թվականին արձանագրված սպանությունների թվում շարունակել են գերակշիռ մաս կազմել հրազենի գործադրմամբ դեպքերը: Բացի այդ, նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ դեպքերի շարքում զգալի մաս են կազմում այնպիսիք, որոնք նախկինում կատարված հանցագործության դեպքերի շարունակությունն են:

88-ով կամ 7.9%-ով /1112-1024/ նվազել են առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերը: Նվազել են նաև առողջությամբ դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերը 7-ով կամ 3%-ով /231-224/:

Մարդկանց թրաֆիքինգի արձանագրված դեպքերը նվազել են 2-ով կամ 25%-ով /8-6/, ինչպիսի ցուցանիշը կարող է նաև չգնահատել դրական՝ հաշվի առնելով տվյալ տեսակի հանցագործությունների լատենտայնության բարձր հավանականությունը:

2020 թվականի արձանագրվել է ինքնասպանության և ինքնասպանության փորձի 633 դեպք՝ նախորդող տարվա 613-ի դիմաց: Դեպքերն աճել են 20-ով կամ 3.3%-ով: Ընդ որում՝ ինքնասպանությունների թիվն առանձին կազմել է 183, նախորդ տարվա 153-ի դիմաց:

Մարդու դեմ ուղղված մյուս հանցագործություններն աճել են 219-ով կամ 7.3%-ով:

Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ - Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմել են հանրապետությունում արձանագրված հանցագործությունների 49.6%-ը: 2020 թվականին արձանագրվել է սեփականության դեմ ուղղված 13129 հանցագործություն նախորդ տարվա 14199-ի փոխարեն, այսինքն՝ թեև սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարժընթացը վերջին տարիներին դրսևորվել է բացառապես աճով, այս տարի դրանց թիվը նվազել է 1070-ով կամ 7.5%-ով: Ընդ որում՝ արձանագրվել է ավազակությունների 37.1, կողոպուտների 12.4, գողությունների 11.3, բնակարանային գողությունների 25.8, յուրացման կամ վատնման՝ 16.1% նվազում: Հակառակ դրան՝ 2020թ. գրանցվել է խարդախության դեպքերի 4.9, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունների 92.5%-ով աճ:

Կոլեգիան փաստում է, որ արձանագրված արդյունքը պայմանավորված է մի կողմից 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի կանխարգելմանն ուղղված՝ հասարակության անդամների վարքագծի վերահսկողության ակտիվ միջոցառումներով և հասարակության անդամների իրավահպատակ վարքագծի վրա էական ազդեցություն ունեցած՝ Հայաստանի և Արցախի Հանրապետություններին պատուհասած ագրեսիվ պատերազմով, մյուս կողմից իհարկե՝ նման բարդ իրավիճակում հանցագործությունների կանխմանն ուղղված միջոցառումների շարունակականության հնարավորինս ապահովմամբ: Այս առումով չի կարելի չարձանագրել, որ բնակարանային գողությունների դեմ պայքարին միտված ՀՀ դատախազության նախաձեռնությամբ և ակտիվ ջանքերով իրականացված միջոցառումներն արդյունք են տվել:

Մասնավորապես, Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան շենքերի փականներով կահավորված մուտքերի թվի աճին զուգահեռ բնակարանային գողությունների թիվը համաչափորեն նվազում է: Նկատի ունենալով ձեռնարկված այս միջոցի արդեն իսկ ապացուցված արդյունավետությունը և առանձին մարզերում աշխատանքի ամփոփման շրջանակներում պարզված այն հանգամանքը, որ մարզերում իրականացվում են քաղաքաշինական բարելավման ծրագրեր, որոնք կարող են ներառել նաև քննարկվող միջոցի ֆինանսավորումը, անհրաժեշտ է սերտ համագործակցել մարզպետարանների հետ, ներկայացնել այս հանցագործությունների արձանագրված տվյալները՝ բնակարանային գողությունների համար հատկապես թիրախային բազմաբնակարան շենքերի կոդավորված կամ այլ փականներով կահավորումն ապահովելու համար:

Կոլեգիան արձանագրում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեփականության դեմ ուղղված որոշ հանցագործություններին նպաստող պայմանների շարքում լուրջ կշիռ ունեն վիկտիմիզացիայի դրսևորումները, դրանց դեմ պայքարը պետք է առավելապես հիմնվի դրանք վերացնելուն ուղղված պրոֆիլակտիկ բացատրական աշխատանքների վրա: Մասնավորապես, շորթման դեպքերի մեջ մեծ թիվ են կազմում այնպիսիք, որոնց պարագայում տուժողին ներկայացված պահանջի հիմքում դրված սպառնալիքի հնարավորությունը տրված է հենց տուժողի կողմից՝ հանցավորին վստահված անձնական գաղտնիք կազմող տեղեկությունների տեսքով: Կամ, խարդախությունների շատ դեպքերում կիրառվում է հրապարակային վաճառքի դրված ապրանքների միջնորդավորված կամ հեռակա գնման պատրվակով հափշտակության մեխանիզմը: Եվ վերջապես, գնալով ավելանում են խաբեությամբ՝ տարբեր ծառայությունների ներկայացուցիչներ ներկայանալով կամ վարձակալելու պատրվակով բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների դեպքերը: Քանի որ նշված դեպքերում վիկտիմիզացիան արտահայտվում է հանցավորի նկատմամբ տուժողի չհիմնավորված մեծ վստահությամբ, հանրային իրազեկման միջոցներն էական դեր կարող են ունենալ դրանց նախականխման համար:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների նվազող ցուցանիշները զուգորդվել են դրանց բացահայտման երբեմն նվազած ցուցանիշներով. բացահայտվել է ավազակությունների 56.8%-ը՝ նախորդ տարվա 71.7%-ի, կողոպուտների 37.8%-ը՝ 45.2%-ի, գողությունների՝ 36.5%-ը՝ 39.1%-ի համեմատ: Դրա հետ մեկտեղ՝ 2020թ.բացահայտվել է բնակարանային գողությունների 18.5%՝ նախորդ տարվա 13.4%-ի դիմաց, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունների՝ 19.3%-ը՝ 16.7%-ի համեմատ:

Կոլեգիայի նիստի ընթացքում անդրադարձ կատարվեց ՀՀ տարածքում առկա տեսագրող սարքերի քարտեզագրման և դրանց արդյունքների պատշաճ օգտագործման շարունակվող խնդրին: Նկատի ունենալով այս աշխատանքում առկա գործնական բարդությունները, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Բաղդասարյանի կողմից առաջարկվեց դիմել իրավասու մարմիններին՝ շինարարական և սպասարկման ոլորտում գործունեության թույլտվություններ տալիս կոնկրետ չափանիշներին համապատասխանող տեսագրող սարքերի տեղադրումը և այդ մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելը պարտադիր դարձնելու հարցը քննարկելու նպատակով:

2020թ.դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 14235 քրեական գործի նկատմամբ, որոնցից ավարտվել է 3780-ը, այդ թվում՝ 2828-ը կարճվել է:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով 2020թ. ձերբակալվել է 213 անձ, որոնցից 10-ի ձերբակալման իրավաչափություն բողոքարկվել է դատարան, բոլոր բողոքները բավարարվել են:

Քրեական գործերով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու 218 միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 174-ը, իսկ վերաքննիչ բողոքի հիման վրա ևս 7-ը բավարարվել են: Կալանքի ժամկետը երկարացնելու 177 միջնորդություն է ներկայացվել դատարան, դրանցից 145-ը բավարարվել է լրիվ, 4-ը մասնակի:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատախազների կողմից տրվել է 763 ցուցում և հանձնարարական՝ նախորդ տարվա 458-ի, վերադաս դատախազների կողմից՝ 66 ցուցում՝ նախորդ տարվա 14-ի դիմաց, ներկայացվել է 189 միջնորդագիր նախորդ տարվա 28-ի դիմաց:

2020թ. մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 941 քրեական գործ 1184 անձի վերաբերյալ: Դատարաններում ավարտված 683 անձի վերաբերյալ 562 քրեական գործից 467-ով 573 անձի նկատմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ, որոնցով ազատազրկման են դատապարտվել 39.2, տուգանքի՝ 34.7 տոկոսը, իսկ 25.8 տոկոսի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 10 գործով 13 անձի նկատմամբ կայացվել են արդարացման դատական ակտեր, առաջադրված մեղադրանքը դատարանի դատական ակտով վերաորակվել է 7 դեպքում:

2020թ. քննված քրեական գործերով պարզվել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններով պետությանը պատճառված է 235.393.139 ՀՀ դրամ վնաս, որից վերականգնվել է 122.556.265 ՀՀ դրամ:

<u>Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ</u> - 2020թ. հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ իրավասու մարմինների վարույթում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է ընդամենը 1382 նյութ (2019թ.-1514 նյութ), որից 844-ով (2019թ.-931) հարուցվել են քրեական գործեր, 515-ով՝ (2019թ.- 528) քրեական գործ հարուցելը մերժվել է, 23 նյութ (2019թ.-55) ուղարկվել ըստ ենթակայության: Բացի հարուցված 844 (2019թ.- 931) քրեական գործերից հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել ևս 201 (2019թ.- 269) քրեական գործ,

որից 78-ը (2019թ.- 128)՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 105-ը (2019թ.- 124)՝ այլ մարմնից ստացված, 2-ը (2019թ.-1)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված, 16-ը (2019թ.-13)՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 387 (2019թ.-357) քրեական գործ:

Համադրելով 2020թ. և 2019թ. տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր ցուցանիշները պարզ է դառնում, որ 2020թ.-ին արձանագրվել է հանցագործությունների թվի ընդհանուր նվազում, չնայած որ առանձին հանցատեսակների գծով արձանագրվել է աճ:

Այսպես.

2020թ.-ի ընթացքում նախապատրաստվել է 1,09 անգամ կամ 132-ով պակաս նյութ քան 2019թ.-ին: Հարուցվել է 1,1 անգամ կամ 87-ով պակաս քրեական գործ քան 2019թ.-ին: Տարվա ընթացքում վարույթում քննվել է 1,15 անգամ կամ 155-ով պակաս քրեական գործ, քան 2019թ.-ին: Հաշվետու ժամանակաշրջանում 1,06 անգամ կամ 18-ով պակաս քրեական գործի վարույթ է կարճվել քան 2019թ.: Դատարան է ուղարկվել 1,5 անգամ կամ 16-ով ավել քրեական գործ և 1,25 անգամ կամ 10-ով ավել անձի վերաբերյալ, քան 2019թ.:

Բացասական են ցուցանիշները հաշվետու ժամանակահատվածում քննված և հաջորդ տարի փոխանցված քրեական գործերի արդյունքներում: Եթե 2019թ.-ից 2020թ. փոխանցվել է 339 քրեական գործի վարույթ, ապա 2020թ.-ից 2021թ. փոխանցվել է 77-ով ավել՝ 416 քրեական գործի վարույթ:

2020թ. ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով 175 (2019թ.-245) նախապատրաստված և ավարտված նյութով, ու քննված և ավարտված քրեական գործով, ինչպես նաև դատարանում քննված ու ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասը կազմել է 12.026.257.043 (2019թ.- 12.399.916.587) ՀՀ դրամ, որից վերականգնվել է 1.989.200.408 (2019թ.- 8.301.785.992) ՀՀ դրամը:

2020թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են ընդհանուրը 23 (2019թ.-24) քրեական գործեր՝ 26 (2019թ.-28) անձի վերաբերյալ, այդ թվում 2 (2019թ.-1) անձ գտնվել են նախնական կալանքի տակ: Ավարտված քրեական գործերից 16-ը (2019թ.-10) 19 (2019թ.-12) անձի վերաբերյալ, քննվել են արագացված դատաքննության կարգով: Քրեական գործերից 18-ով՝ (2019թ.-16) 21 (2019թ.-18) անձի վերաբերյալ, դատապարտվել են, որից 8 անձ (2019թ.-14 անձ)՝ ազատազրկման, 7 անձ (2019թ.-4 անձ)՝ տուգանքի, 7 (2019թ.-12) անձ պատժից ազատվել է համաներման ակտով, 4 գործով 4 անձի վերաբերյալ գործերը կարճվել են վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր վնասը կազմել է 160.437.786 դրամ, որից պետությանը պատճառված վնասը՝ 158.023.888 դրամ (2019թ.-165.152.480) դրամ: Վերականգնվել է 7.899.000 դրամ, որից պետությանը պատճառված վնասից՝ 7.643.000 դրամ (2019թ.-6.859.900):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազները դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն են իրականացրել ՀՀ ՊԵԿ քննչական վարչության քննիչների և ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության հետաքննիչների կողմից նախապատրաստված նյութերի նկատմամբ: Նշված ժամանակահատվածում նախաքննության և հետաքննության մարմինների կողմից նախապատրաստվել և ավարտվել են ընդամենը 749 նյութ (2019թ.- 577):

Ավարտված 749 նյութից քրեական գործ է հարուցվել 374 նյութով (2019թ.-279), որից 3-ը՝ դատախազի (2019թ.-1), 11-ը քննիչների (2019թ.-25) և 360-ը՝ հետաքննիչների կողմից:

Թվով 373 նյութով (2019թ.-296), քրեական գործի հարուցումը մերժվել է, այդ թվում 268-ը արդարացման հիմքով, իսկ 5-ը՝ ոչ արդարացման հիմքով: 1 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

2020թ. ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից 707 (2019թ.-580) քրեական գործի նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում: Համեմատության համար նշենք, որ այդ թիվը 127 քրեական գործով ավել է նախորդ՝ 2019թ. իրականացրած հսկողական քրեական գործերի թվից:

2020թ. ընթացքում վարույթում գտնվող 707 (2019թ.-580) քրեական գործից ՊԵԿ քննչական վարչության քննիչների կողմից ավարտվել է 199 (2019թ.-187) քրեական գործի վարույթ: Ավարտված գործերից 20-ը (2019թ.-10) 22 անձի (2019թ.-12) վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ավարտված 199 քրեական գործերից 180-ի (2019թ.-177) վարույթները կարճվել են, որոնցից 147-ը (2019թ.-160) արդարացման, 33-ը (2019թ.-17)՝ ոչ արդարացման հիմքերով, այդ թվում 3-ը (2019թ.-3) վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Վարույթում գտնվող 282 (2019թ.-229) քրեական գործեր մնացել են անավարտ:

ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի կողմից ՀՀ ՊԵԿ քննչական վարչության պետին հասցեագրված գրությամբ հանձնարարվել է քրեական գործերով որպես կալանադրման ենթակա գույք դիտարկել նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից արտահանվող կամ ներմուծվող ապրանքները՝ խստիվ հետևելով տնտեսական գործունեության խոչընդոտելու հնարավոր դրսևորումներին՝ թույլ չտալով որևէ անհարկի միջամտություն այդ գործընթացին:

Միաժամանակ հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ որպես կասկածյալ կամ մեղադրյալ դատավարական կարգավիճակ ունեցող անձինք ունեն այլ անշարժ կամ շարժական գույք՝ ձեռնպահ մնալ տնտեսական գործունեության առարկա հանդիսացող ապրանքների վրա կալանք դնելուց:

Կոլեգիան արձանագրում է, որ արձանագրված ցուցանիշները՝ այն է որոշակի հանցատեսակներով, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով, նախատեսված հանցագործություններով դեպքերի աճը, քրեական գործերով վերջնական որոշումների պակաս կայացումը, փոխանցված գործերի ավելացումը, ինչպես նաև պատճառված վնասի վերականգնման նվազումը, մեծապես պայմանավորված է եղել ինչպես պանդեմիայի պայմաններում մեկուսացման, ինքնամեկուսացման կանոնները պահպանելով, այնպես էլ պատերազմական գործողություններով ու դրանով պայմանավորված ռազմական դրությամբ:

ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին հանձնարարվել է ուսումնասիրել իրենց հսկողության ներքո գտնվող 8 ամիս և ավել քննվող տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը և ողջամիտ ժամկետում զեկուցագրեր ներկայացնել՝ նշելով կատարված դատավարական և քննչական գործողությունների ժամանակագրությունը և նշված գործերի նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները, բացթողումները:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ - 2020 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության իրավասությանը վերապահված հանցագործության 4975 դեպք, նախորդ տարվա 4037 դեպքի դիմաց, որից 2361-ը կամ 45.5%-ը՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործությունների դեպքերն աճել են 938-ով կամ 23.2 %-ով: Բացահայտումը կազմել է 66.5%, նախորդ տարվա 71,9%-ի դիմաց:

Միաժամանակ ոլորտի առանձին հանցատեսակներով արձանագրվել է դեպքերի նվազում:

Զգալիորեն նվազել են ՃԵԿ խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերը: 2020 թվականին արձանագրվել է 1360 դեպք, 2019թ. 1523 դեպքի դիմաց, այսինքն՝ դեպքերը նվազել են 163-ով կամ 10.7%-ով: Բացահայտումը կազմել է 82.1% նախորդ տարվա 85.5%-ի դիմաց:

Սակայն դրա հետ մեկտեղ, աճել է մահվան ելքով դեպքերի քանակը: 2020թ. արձանագրվել է 229 դեպք, 2019թ. 226 դեպքի դիմաց, այսինքն՝ դեպքերն աճել են 3-ով կամ 1.3%-ով: Բացահայտումը էապես նվազել է և կազմել 57.1%՝ նախորդ տարվա 70.8%-ի դիմաց: ՃԵԿ խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերի բացահայտման ցուցանիշի նվազումը կարող է պայմանավորված լինել այդ գործերով նշանակվող փորձաքննությունների ձգձգումներով:

Բացի ավանդական պատճառներով արձանագրված դեպքերից/արագության գերազանցում և այլ/, հաճախ ճանապարհատրանսպորտային պատահարները տեղի են ունենում ճանապարհի այն հատվածներում, որտեղ իրականացվում են շինարարական կամ այլ աշխատանքներ և առերևույթ պատահարի պատճառ են հանդիսացել ճանապարհի տվյալ հատվածում երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ բավարար միջոցներ ձեռնարկված չլինելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումներին տրվել է այդ ուղղությամբ պատշաճ քննության իրականացում ապահովելու մասին հանձնարարական:

Էական աճ է արձանագրվել նաև ապօրինի ծառահատումների դեպքերով:

Այսպես, եթե 2019թ. ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով հարուցվել է 282 գործ, ապա 2020 թվականին՝ 369 գործ, այսինքն՝ դեպքերը աճել են 87-ով կամ 31%-ով:

Ապօրինի ծառահատումների դեպքերի աճը պայմանավորված է դրանց լատենտայնության էական նվազմամբ, որն էլ հետևանք է այդ դեպքերի հայտնաբերման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների դրսևորած որոշակի հետևողականության:

Այդ դեպքերի վերաբերյալ հարուցված քրեական գործերի քանակական աճին անշուշտ նպաստել են նաև 2019 թվականին այդ ոլորտում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում ընդլայնվել են տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումները, հանցագործության առարկաների ցանկը: Բացի այդ, իջեցվել է հանցագործության հետևանքով պատճառվող վնասի՝ զգալի չափի շեմը:

Միաժամանակ ուսումնասիրվել և ամփոփվել է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քննված քրեական գործերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը, որի արդյունքում վեր են հանվել նշված հանցակազմի կիրառման հետ կապված մի շարք խնդրահարույց իրավիճակներ և այդ խնդիրների լուծման նպատակով առաջարկություն է ներկայացվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարին, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի

դիսպոզիցիան հստակեցնելու և դրա որոշակիությունն ապահովելու նպատակով օրենսդրական փոփոխությունների նախագիծ է մշակվել և ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն:

2020թ. ընթացքում հանրապետությունում դեպքերի որոշակի աճ է արձանագրվել նաև կիբերհանցագործություններով: 2020 թվականին արձանագրվել է 55 դեպք, 2019թ. 46 դեպքի դիմաց, այսինքն՝ դեպքերն աճել են 9-ով կամ 19.6%-ով, ինչը կարող է պայմանավորված լինել ինտերնետային ցանցում առկա տեղեկատվությունը որսացող հաքերային ծրագրերի տարածման: Բացահայտումը կազմել է 2.6%՝ նախորդ տարվա 8.8%-ի դիմաց, ինչը առավելապես պայմանավորված է օտարերկրյա պետություններ ուղարկված հարցումների կատարման տևական ձգձգումներով:

Զգալիորեն աճել են ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության այլ դեպքերը: Եթե 2019թ. արձանագրվել է նման բնույթի 586 դեպք, ապա 2020թ. ընթացքում՝ 641 դեպք, այսինքն՝ դեպքերը աճել են 55-ով կամ 9.4%-ով: Բացահայտումը կազմել է 82.9%՝ նախորդ տարվա 90.5%-ի դիմաց:

Կոլեգիան արձանագրում է, որ այս բնույթի հանցագործությունների դեպքերի աճին առերևույթ նպաստել է 2020թ. Արցախյան 2-րդ պատերազմը, որի ընթացքում, ինչպես նաև դրանից հետո ՀՀ վերադարձող մի շարք անձանց մոտ հայտնաբերվել են ապօրինի պահվող և տեղափոխվող զենք-զինամթերք: Նախատեսվել է այս կապակցությամբ 2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում իրականացնել ուսումնասիրություն:

2020թ. ընթացքում զգալի աճ է արձանագրվել նաև հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններով: Եթե 2019 թվականին արձանագրվել է 418 դեպք, ապա 2020 թվականին՝ 1290 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 872-ով կամ 208.6%-ով:

Այդ դեպքերի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածում կատարված փոփոխություններով ու լրացումներով: Միայն 2020թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածով հարուցվել է 900 քրեական գործ:

Կոլեգիան փաստում է, որ պետության կողմից այս ուղղությամբ իրականացվող քրեական քաղաքականությանն ուղղված է ճանապարհատրանսպորտային պատահարների նվազմանը, որը տվել է իր դրական արդյունքը: Մասնավորապես՝ եթե 2019 թվականին ճանապարհատրանսպորտային պատահարների քանակն ավելացել էր 225 դեպքով, ապա 2020 թվականին տրանսպորտային միջոցների քանակի աճին զուգահեռ՝ այն նվազել է 163 դեպքով:

Քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնող օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու տարում նշված հանցատեսակներով արձանագրվել է 16 դեպք:

Քննված 16 քրեական գործերից 3 գործ 20 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Դատարան ուղարկված գործերով 20 անձանցից 4-ն ունեցել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, որոնցից 3-ը՝ «օրենքով գողի»:

Կոլեգիայի նիստի ժամանակ նշվեց, որ այս բնույթի հանցանքների վերաբերյալ քրեական գործերով քննության ընթացքում առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված են նման արարքների ապացուցման հետ: Մասնավորապես, սովորաբար նման գործերով վկաները խուսափում են քրեական ենթամշակույթին առնչվող անձանց մերկացնող ցուցմունքներ տալուց, ինչի արդյունքում ապացուցման գրեթե ողջ բազան կառուցվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալների վրա:

<u>Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ</u> - 2020թ. ընթացքում գրանցվել է բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների

դեպքերի թվի աճ և ինչպես միշտ գերակշիռ մասը կազմում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը:

Արձանագրվել է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների 1226 դեպք, նախորդ տարվա 1088 դիմաց, դեպքերն ավելացել են 138-ով կամ 12,7%-ով: Բացահայտումը կազմել է 51,2%ը, նախորդ տարվա 59,7%-ի դիմաց:

Նույն ժամանակահատվածում արձանագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության 872 դեպք, որից 532-ը՝ իրացման նպատակով, նախորդ տարվա 847-ի դիմաց /508-ը՝ իրացման նպատակով/: Թմրամիջոցների ապօրին շրջանառության դեպքերն ավելացել են 25-ով կամ 3%-ով, որից 24-ը՝ իրացման նպատակով շրջանառության դեպքեր են: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտումը կազմել է 57,1%, որից իրացման նպատակով շրջանառության դեպքերինը՝ 37%: 2019թ. նշված հանցագործությունների բացահայտման ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 62,2% և 42,3%:

2020թ. ընթացքում արձանագրվել է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության 222 դեպք, նախորդ տարվա 163-ի դիմաց, դեպքերի թիվն աճել է 59-ով կամ 36,2%-ով: Բացահայտվել է մաքսանենգության դեպքերի 23,1%-ը, նախորդ տարվա 39%-ի դիմաց:

Կոլեգիան փաստում է, որ մաքսանենգության դեպքերի բացահայտման նման բացասական վիճակագրությունն ունի և օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, թերևս օբյեկտիվ կարող է համարվել այն հանգամանքը, որ տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի որոշ գործողություններ կատարվում են ՀՀ սահմաններից դուրս և քրեական հատպնդման մարմինները զրկված են արագ և նպատակային գործողություններ ձեռնարկելու հնարավորությունից, իսկ միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացվող քննչական պահանջները երբեմն մնում են անպատասխան, իսկ ստացված արդյունքները ժամանակավրեպ: Միևնույն ժամանակ, այս հանցատեսակի քննության մեթոդիկան ևս ունի վերանայման կարիք, որի ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է օպերատիվ խորհրդակցություն, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության և ՀՀ ՊԵԿ-ի ղեկավար անձնակազմը, արդյունքում մշակվել են այս հանցատեսակի դեմ պայքարի քաղաքականություն, օպերատիվ հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների հաջորդականությունն ու ծավալը, որը կարծում եմ հետագայում կտա իր արդյունքները:

Չնայած արձանագրված դեպքերի աճին 2020թ. ընթացքում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է առգրավված հոգեմետ նյութերի և թմրամիջոցների քանակը:

Ի հակադրություն դրան 2020թ. ընթացքում ավելացել է ավելի բարձր վտանգավորություն ներկայացնող այնպիսի թմրամջոցների առգրավումը, ինչպիսիք են կոկաինը, հերոինը, ամֆետամինը և մեթադոնը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների արձանագրված դեպքերի աճը, հաշվի առնելով այդ հանցատեսակի բարձր լատենտայնությունը, գնահատվում է որպես դրական ցուցանիշ, որը համապատասխանում է հասարակական կյանքի իրողություններին:

Միևնույն ժամանակ բացահայտման ցուցանիշների անկումը խիստ մտահոգիչ է և արտացոլում է իրավապահ մարմինների գործունեության ոչ բավարար արդյունավետությունը:

Իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությանն էապես կախված է նշված հանցավոր դրսևորումների դեմ պայքարում օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամանկին և որակով իրականացումից: Թմրամիջոցների, հոգեմետ

/հոգեներգործուն/ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների, այդ թվում՝ դրանց մաքսանենգության, վերաբերյալ գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս դատական պրակտիկայում ապացուցմանը ներկայացվող պահանջների պայմաններում, ավանդական քննչական գործողությունները հաճախ արդյունավետ չեն ապացույների հավաքման առումով:

Միևնույն ժամանակ, համապատասխան մարմինների կողմից առավելապես արտաքին և ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, վերահսկելի մատակարարում և գնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամանակին և որակյալ իրականացման դեպքում նշված հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը էապես բարձրանում է:

Անդրադառնալով իրավակիրառ պրակտիկայում առկա ակնառու խնդիրներին հարկ է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում շարունակում են հանդիպել դեպքեր, երբ թմրամիջոցների ապօրինի շրջանառության առարկան հայտնաբերելու և վերցնելու նպատակով դատավարական գործողությունները կատարվում են դրանց կարգը սահմանող օրենսդրության պահանջների էական խախտմամբ կամ կատարվում են քրեական դատավարության օրենսգրքով տվյալ փուլի համար չնախատեսված դատավարական գործողություններ: 2020թ. ընթացքում կայացված արդարացման դատական ակտով արձանագրվել է, որ դեպքի վայր հանդիսացած բնակարանը որտեղից հայտնաբերվել է գործով իրեղեն ապացույց հանդիսացող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցը, զննվել է ինչպես առանց այն զբաղեցնող անձի համաձայնության, այնպես էլ առանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշման կայացման: Դատարանն արձանագրել է, որ զննությունը կատարվել է քրեադատավարական նորմերի պահանջների էական խախտմամբ, հետևաբար և ինչպես դեպքի վայրի զննության արձանագրությունը, այնպես էլ դրանից բխող մնացած ապացույցներն անթույլատրելի են և չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում:

Որոշակի խնդիրներ են առկա նաև միջազգային-իրավական համագործակցության ոլորտում: Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածով հարուցված, այդ թվում՝ ներկայումս վարույթը կասեցված քրեական գործերով ԱՄՆ իրավասու մարմիններին վերջին տարիներին ուղարկված իրավական օգնության միջնորդությունների գերակշիռ մեծամասնությունը չի կատարվել գրեթե նույն՝ դեպքերի նվազ կարևորություն ունենալու պատճառաբանությամբ, ինչի արդյունքում վարույթն իրականացնող մարմինը զրկված է տասնյակ քրեական գործերի վերջնական ընթացքը լուծելու հնարավորությունից: ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի կողմից ստացվում են, ըստ էության, նույնաբովանդակ պատասխաններ՝ առ այն, որ գործերն էական լրջություն և կարևորություն չեն ներկայացնում, որպիսի պայմաններում համապատասխան ռեսուրսներ չեն տրամադրվի իրավական օգնության մասին միջնորդության կատարման համար:

Այս բնույթի գործերով լիազորությունն իրականացնելու արդյունքում կայացվել են դատախազական ներգործության 251 ակտ, այդ թվում՝ վերացվել են հետաքննության և նախաքննության մարմինների կողմից կայացված 42 անհիմն որոշում, տրվել է 188 ցուցում, ներկայացվել 21 միջնորդագիր:

<u>Կոռուպցիոն բնույթի հանցագործություններ -</u> 2020թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 1810 նյութ (2019թ.- 2083 նյութ), որից 1232-ով (2019թ.- 1399) հարուցվել

են քրեական գործեր, 561-ով՝ (2019թ.- 655) քրեական գործ հարուցելը մերժվել է, իսկ 17 նյութ (2019թ.- 29) ուղարկվել ըստ ենթակայության: Բացի հարուցված 1232 (2019թ.- 1399) քրեական գործերից՝ հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 515 (2019թ.- 535) քրեական գործ, որից 76-ը (2019թ.- 116)՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 359-ը (2019թ.- 354)՝ այլ մարմնից ստացված, 3-ը (2019թ.- 1)՝ այլ պետության քրեական հետապնդման մարմնից ստացված, 10-ը (2019թ.- 15)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 67-ը (2019թ.-49)՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 788 (2019թ.-691) քրեական գործ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 2535 (2019թ.- 2625) քրեական գործից ընդամենն ավարտվել է 716 (2019թ.-1006) գործի վարույթ, որից 533-ը (2019թ.- 766) կարճվել է: Հիշյալ 533 քրեական գործերից 419-ի (2019թ.- 576) վարույթը կարճվել է արդարացման, իսկ 114-ը՝ (2019թ.- 190)՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթն ավարտված մյուս 183 քրեական գործերը՝ 410 անձի վերաբերյալ (2019թ.- 240-ը՝ 447 անձի վերաբերյալ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, ընդ որում՝ 410 անձանցից 16-ը (2019թ.- 27) գտնվել են կալանքի տակ:

Թեև 2019 և 2020 թվականների վիճակագրական տվյալների համադրված վերլուծությունն առաջին հայացքից կարող է վկայել հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների նվազման մասին, սակայն իրականում նշված հանցատեսակի ցուցանիշներում էական նվազումներ չեն եղել: Մասնավորապես, այս համատեքստում պետք է նշել, որ մինչև ՀՀ քրեական օրենսգրքում 2020 թվականի մարտի 25-ի փոփոխությունը՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ 2008 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով, որը ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով ուժը կորցրած է ճանաչվել և հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, որով կոռուցպիոն բնույթի հանցագործություններ են համարվել 67 /վաթսունյոթ/ հանցակազմեր: ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 56 հրամանով այդ ցանկը լրացվել է ևս 3 /երեք/ հանցակազմերով, այդպիսով ընդհանուր կարգավորման արդյունքում կոռուպցիոն բնույթի հանցագործություններ են համարվել թվով 70 /յոթանասուն/ հանցակազմեր: Հարկ է նկատել, որ 2019թ. հաշվետու տարին ամփոփվել է հենց նշված թվաքանակի հանցակազմերի վերաբերյալ վիճակագրական տվյալներով:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների տեսակները ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանվել են միայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.20 N ՀՕ-207-Ն ՀՀ օրենքով, որով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» վերտառությամբ 6-րդ հավելվածով /Այսուհետ՝ նաև Հավելված/, որում ընդգրկված են թվով 28 /քսանութ/ հանցակազմեր, ընդ որում՝ 2020 թվականի հաշվետու ժամանակաշրջանն ամփոփվել է հենց այդ հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների հիման վրա:

2020 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր գույքային վնասի չափը կազմել է 6.331.155.757 ՀՀ դրամ (2019թ.՝ 27.547.622.468 ՀՀ դրամ):

Ընդ որում՝ վերը նշված ընդհանուր վնասից 5.802.738.606 ՀՀ դրամը պատճառվել է պետությանը, 362.605.169 ՀՀ դրամը՝ համայնքներին, իսկ 165.811.982 ՀՀ դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բացի այդ, 2020թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր գույքային վնասից վերականգնվել է 4.518.295.697 ՀՀ դրամ գումար (2019թ.՝ 2.026.457.711 ՀՀ դրամ), այսինքն՝ 2.491.837.986 ՀՀ դրամով ավելին, քան 2019թ. արձանագրված՝ նույն ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասից վերականգնված չափը:

Ընդ որում՝ վերը նշված վերականգնված 4.518.295.697 ՀՀ դրամ գումարից 4.239.936.553 ՀՀ դրամը կազմել է պետությանը պատճառված վնասի վերականգնումը:

2020թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 104 (2019թ.-160) քրեական գործ՝ 152 (2019թ.-286) անձի վերաբերյալ, այդ թվում 1 (2019թ.-10) անձ գտնվել է նախնական կալանքի տակ:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր վնասը կազմել է 1.548.030.727 ՀՀ դրամ (2019թ.- 2.384.192.760 ՀՀ դրամ), որից վերականգնվել է 110.284.904 ՀՀ դրամը (2019թ.- 442.259.483 ՀՀ դրամ):

Ընդ որում՝ վերը նշված ընդհանուր վնասից 287.616.989 ՀՀ դրամը եղել է պետությանը պատճառված վնաս, 16.137.007 ՀՀ դրամը՝ համայնքներին, իսկ 1.244.276.731 ՀՀ դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Պետությանը պատճառված վերը նշված 287.616.989 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 62.796.878 ՀՀ դրամը:

Արձանագրված ցուցանիշների համադրված վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ կոռուպցիոն հանցագործությունների շարժընթացում 2020 թվականի ընթացքում արձանագրված որոշակի բացասական ցուցանիշներն առավելապես կապված են եղել Covid-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների, ինչպես նաև՝ Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմի հետ:

Կոլեգիան արձանագրում է, որ 2019 թվականի համեմատ 2020 թվականի ընթացքում դրական տեղաշարժ է գրանցվել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասի վերականգնման վերաբերյալ ցուցանիշներում: Մասնավորապես, թեև 2019թ. համեմատ 2020թ. ընթացքում ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասը նվազել է 21.216.466.711 ՀՀ դրամով կամ շուրջ 77%-ով, սակայն միևնույն ժամանակ 2020թ. ընթացքում շուրջ 223%-ով կամ 2.491.837.986 ՀՀ դրամով ավելի գումար է վերականգնվել, քան 2019թ. ընթացքում (2019թ.՝ 2.026.457.711 ՀՀ դրամ. 2020թ. ընթացքում՝ 4.518.295.697 ՀՀ դրամ գումար):

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազների անմիջական հսկողությամբ նախապատրաստվել է 17 նյութ, որից 7-ը՝ կոռուպցիոն բնույթի:

Վերոհիշյալ 7 նյութերն էլ նախապատրաստվել են քննիչների կողմից, ընդ որում, քննիչների կողմից նախապատրաստված 7 նյութերից 6-ով կայացվել է քրեական գործ հարուցելու, իսկ մեկ նյութով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներ:

2020թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից 183 (2019թ.՝ 147) քրեական գործի նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, որից 153-ը՝ (2019թ.՝ 142) կոռուպցիոն բնույթի հանցագործության դեպքով հարուցված քրեական գործերով:

2020թ. ընթացքում վարույթում գտնվող 183 քրեական գործից 73-ը (2019թ.՝ 33) փոխանցվել են նախորդ տարվանից, իսկ 77-ը ստացվել են այլ մարմիններից (2019թ.՝ 72), 14-ը (2019թ.՝ 31) հարուցվել են 2020թ. ընթացքում, 16-ն անջատվել են քրեական գործերից, 1-ի վարույթը վերսկսվել է կասեցումից կամ կարճումից հետո, 2-ը ստացվել են այլ պետության քրեական հետապնդում իրականացնող մարմնից,

2020թ. ընթացքում վարույթում գտնվող՝ 183 քրեական գործից ավարտվել են 42-ը (2019թ.՝ 25), այն է՝ 28-ը (2019թ.՝ 18) կարճվել են (24-ը՝ արդարացնող, 4-ը՝ ոչ արդարացնող հիմքով), իսկ 14-ը՝ 66 անձի վերաբերյալ(2019թ.՝ 7-ը՝ 22 անձի վերաբերյալ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

2020թ. ընթացքում դատարաններում քննված քրեական գործերից ավարտվել է 3 գործ՝ 3 անձի վերաբերյալ:

2020թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազների անմիջական հսկողության գործերով դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 10 միջնորդություն, որից 3-ը բավարարվել են, 7-ը՝ մերժվել, ընդ որում՝ 6 միջնորդություն մերժվել է կալանավորման հիմքերի, իսկ 1 միջնորդություն՝ հիմնավոր կասկածի բացակայության պատճառաբանությամբ:

2020թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազների անմիջական հսկողության գործերով վարույթն իրականացնող մարմնին տրվել է 7 ցուցում (2019թ.՝ 1), որոնց դեմ առարկություններ չեն ներկայացվել:

2020թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից իրենց անմիջական հսկողության քրեական գործերով նախապատրաստվել և ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի ստորագրմանն է ներկայացվել ՀՀ ԱԱԾ տնօրենին, ՀՀ ոստիկանության պետին ուղղված համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարությունների նախագծեր, ինչպես նաև վարչության դատախազների կողմից ՀՀ տարբեր իրավապահ մարմիններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություններ, ՀՀ պետական տարբեր մարմիններին հասցեագրվել են տարաբնույթ հարցումներ (ընդհանուր՝ 26 հարցում):

Պետական շահերի պաշտպանության ոլորտ - ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2020թ.-ին «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական (պետական բաժնեմասով) կազմակերպությունների՝ պետության գույքային շահերին առնչվող հայցերի վերաբերյալ ստացված տեղեկատվության, պետական մարմինների հաղորդումների, ՀՀ հաշվեքննիչ պալատի հաշվետվությունների, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիմքերով 74 ուսումնասիրություն է իրականացվել պետական կառավարման տարբեր ոլորտներում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ /2019թ.-ին իրականացվել է 75 ուսումնասիրություն/, հայտնաբերվել է 361 իրավախախտում, պետական շահերի խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով ներկայացվել է 5 հաղորդում և միջնորդագիր:

2020թ. ընթացքում դատարան է հարուցվել 11 հայց, որից 6 հայց քաղաքացիական դատավարության կարգով՝ ընդհանուր 474 մլն. 347 հազ. դրամ գումարի բռնագանձման հայցապահանջով, 2-ը վարչական դատավարության կարգով, 1 հայց բռնագանձման ենթակա

գումարները գանձելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի պահանջներին համապատասխան բաժինն առանձնացնելու, դրանց վրա բռնագանձում տարածելու պահանջով, 3 հայց հարուցվել է նախորդ տարիների բավարարված հայցերով պարտապան ֆիզիկական և իրավաբանական անձանց սնանկ ճանաչելուն, որոնցով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 57 մլն. 346 հազ. դրամ /2019թ-ին հարուցվել է 11 հայց, որից ընդհանուր 1 մլրդ. 079 մլն. 557 հազ. դրամ բռնագանձման հայցապահանջով 3 հայց/:

Հաշվետու ժամանակահատվածում դատարանների կողմից քննությամբ ավարտվել է 1 հայց՝ 1 մլն. 265 հազ. դրամ հայցապահանջով, որը ամբողջությամբ բավարարվել է, նախորդ ժամանակաշրջաններում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 7 մլն. 795 հազ. դրամ, իսկ 50 հայցի դատաքննությունն ընդհանուր 6 մլրդ. 267 մլն. 283 հազ. դրամ հայցապահանջով դեռևս գտնվում է ընթացքի մեջ:

2020թ. ընթացքում վարչության կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և ՀՀ Վճռաբեկ դատարաններ են ներկայացվել համապատասխանաբար՝ 10 վերաքննիչ և 4 վճռաբեկ բողոք: 10 վերաքննիչ բողոքից 6-ը բավարարվել է, 4-ը մերժվել, 4 վճռաբեկ բողոքից 2-ը մերժվել է, 2-ը գտնվել է ընթացքի մեջ:

Բացի այդ, իրականացված 74 ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված մի շարք խախտումների կապակցությամբ հարուցվել է 48 քրեական գործ (2019թ. ընթացքում՝ 45 քրեական գործ), որոնցով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 14 մլրդ. 081 մլն. 918 հազ. դրամ (2019թ. ընթացքում՝ 16 մլրդ. 497 մլն. 310 հազ. դրամ), 27 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքները՝ պետությանը պատճառված ընդհանուր 3 մլրդ. 956 հազ. դրամ վնասի վերաբերյալ ուղարկվել են քննչական մարմիններ (2019թ. ընթացքում 19 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքները՝ պետությանը պատճառված ընդհանուր 12 մլրդ. 802 մլն. 056 հազ. դրամ վնասի վերաբերյալ ուղարկվել են քննչական մարմիններ):

Այսպիսով, 2020թ. ընթացքում հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 18 մլրդ. 033 մլն. 051 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության դատախազության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների (բացառությամբ զինվորական դատախազությունը), ներառյալ՝ վարչության կողմից կատարվել է 534 ուսումնասիրություն /2019թ.՝ 736 ուսումնասիրություն/, հայտնաբերվել է 593 իրավախախտում /2019թ.՝ 939 իրավախախտում/, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 54 անձ /2019թ.՝ 167 նախազգուշացում/, կամովին պետական բյուջե է վերականգնվել է 212 մլն. 131 հազ. դրամ /2019թ.՝ վերականգնվել է 114 մլն. 277 հազ. դրամ/, ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել է 33 հաղորդում և միջնորդագիր /2019թ.՝ 92 հաղորդում/, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 48 հայց՝ ընդհանուր 569 մլն. 015 հազ. դրամ հայցապահանջով, հարուցվել է 161 քրեական գործ /2019թ՝ հարուցվել է 228 քրեական գործ/, 440 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքները ուղարկվել են ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և ՀՀ մարզերի դատախազությունների, ներառյալ՝ վարչության կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով՝ հարուցված հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 19 մլրդ. 426 մլն. 025 հազ. դրամ, որից 18 մլրդ. 507 մլն. 398 հազ. դրամը վարչության կողմից:

Դատախազության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների (բացառությամբ զինվորական դատախազությունը), ներառյալ՝ վարչության կողմից վերականգնվել է շուրջ 221 մլն. 608 հազ. դրամ:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական գույքի կոմիտեից ստացված տեղեկատվության և կից ներկայացված փաստաթղթերի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում 12 դեպքերով կատարված ուսումնասիրությունների արդյունքներով հարուցվել են 12 քրեական գործեր, որոնցով արձանագրվել է պետությանը պատճառված ընդհանուր շուրջ 1 մլրդ. 206 մլն. 329 հազ. դրամի գույքային վնաս:

Էական առաջընթաց է արձանագրվել նաև ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների ընթացքում պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացումների արդյունքում կամովին վերականգնված վնասի չափի հարցում:

2020թ.-ին, 2019թ. համեմատ շուրջ 2 անգամ ավելացել է դատախազների կողմից նախազգուշացումների արդյունքում կամովին վերականգնված վնասի չափը:

Այսպես, եթե 2019թ. ընթացքում դատախազների կողմից նախազգուշացումների արդյունքում կամովին վերականգնված վնասը ընդհանուր առմամբ կազմել է 114 մլն. 277 հազ. դրամ, ապա 2020թ.-ին վերականգնված ընդհանուր վնասը կազմել է 212 մլն. 131 հազ. դրամ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ - ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից 2020 թվականի ընթացքում կատարվել է 51 ստուգում և ուսումնասիրություն, որոնց արդյունքում հայտնաբերվել է 21 խախտում: Պատկան մարմիններին ուղարկվել է 1 հաղորդում: Ներկայացվել է 17 միջնորդագիր/, որոնց հիման վրա վերանայվել է օրենսդրության խախտումներով կայացված 16 ակտ:

Վարչության կողմից ստուգվել է նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց նկատմամբ տույժի կամ խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կայացված 7 որոշում, որոնցից 4-ը կասեցվել է և վերանայման միջնորդագրեր են ուղարկվել քրեակատարողական հիմնարկների պետերին:

ՀՀ դատախազության դատախազների կողմից /ներառյալ նաև Վարչության դատախազների կողմից/, հաշվետու ժամանակաշրջանում «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում կատարվել է 1134 ստուգում և ուսումնասիրություն , որոնց արդյունքում հայտնաբերվել է 63 խախտում: Պատկան մարմիններին ուղարկվել է 5 հաղորդում : Ներկայացվել է 20 միջնորդագիր, որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 16 ակտ : Դատախազների կողմից հարուցվել է 6 քրեական գործ , կասեցվել է օրենսդրությանը հակասող 17 ակտ /2019թ.՝ 40/:

ՀՀ դատախազության դատախազների կողմից 2020 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում կատարվել է 58 ստուգում և ուսումնասիրություն, որի արդյունքում հայտնաբերվել է 30 խախտում, պատկան մարմիններին ուղարկվել է 3 հաղորդում, ներկայացվել է 1 միջնորդագիր:

ՀՀ դատախազության դատախազները /ներառյալ Վարչության դատախազները/ հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել են թվով 1252 դատական քննության /2019թ. ընթացքում՝ 1870/:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 48-ով բերվել է վերաքննիչ բողոք , որոնցից 17-ը բավարարվել է , 5-ով բերվել է վճռաբեկ բողոք:

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով քրեակատարողական հիմնարկներում մահացել է թվով 5 պահվող անձ: Բոլոր դեպքերի կապակցությամբ հարուցվել են քրեական գործեր:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 1967, որոնցից 914-ը՝ կալանավորված անձ՝ 1053 դատապարտյալ:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ - Չնայած առաջացած մարտահրավերներին ու բարդություններին՝ ՀՀ դատախազությունը 2020թ. զգալի աշխատանք է կատարել միջազգային իրավական համագործակցության ոլորտում: Զգալիորեն աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ուղարկված և ստացված միջնորդությունների թիվը: 2020 թվականին այլ պետություններ են ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 835 միջնորդություններ նախորդ տարվա 617-ի, ստացվել 177-ը՝ 163-ի փոխարեն: 2020թ ներկայացվել են հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 38 միջնորդություններ, որոնցից 12-ը բավարարվել են, բավարարվել են նաև նախկինում ներկայացված ևս 6-ը, 6 միջնորդություն մերժվել է: Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 20 միջնորդություններից բավարարվել է 6-ը, մերժվել է՝ 2-ը: Վարչության դատախազները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարան են ներկայացրել միջնորդություններ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց նկատմամբ ժամանակավոր, հանձնման համար կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանավորման ժամկետները երկարացնելու մասին և մասնակցել դրանց, ինչպես նաև հանձնումը թույլատրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշումների դեմ բերված բողոքներով կայացած դատական նիստերին: Վարչության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 4 քրեական գործ: Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից վարչությունում ստացվել է 12 քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցության վարչությունում մշակվել են նաև ոլորտում աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող, մարդու իրավունքների անհամաչափ սահմանափակումները բացառող ուղեցույցներ, մշակվել իրավական ակտերի նախագծեր, ինչպես օրինակ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու իրավակարգավորումների վերաբերյալ փոփոխություններն են:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի ու Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

2020թ. անցկացվել են ԱՊՀ մասնակից- երկրների դատախազների համակարգող խորհրդի հերթական՝ 30-րդ հոբելյանական և Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ-պետությունների գլխավոր դատախազների հերթական տարեկան

նիստերը, որոնց ընթացքում ՀՀ դատախազությունը ի թիվս օրակարգային հարցերի ներկայացրել է նաև Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները և բարձրացրել դրանց դեմ համատեղ պայքարի ակտիվացման անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության նկատմամբ 2020թ. սանձազերծված ագրեսիվ պատերազմի և դրա ընթացքում իրականացվող ծանրագույն հանցագործությունների, մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի աղաղակող և կոպիտ խախտումների խնդիրները բարձրացվել են նաև ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի, Եվրոջասթի շրջանակներում, ինչպես նաև գործընկեր դատախազությունների ղեկավարներին հասցեագրված նամակներով՝ փոխանցելով նաև ռազմական գործողություններին վարձկանների ներգրավման, ահաբեկչության ֆինանսավորման, մշակութային արժեքների ոչնչացման, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումների վերաբերյալ ապացույցներ:

ՀՀ գլխավոր դատախազը, անդրադառնալով հանցավորության վիճակին, մտահոգություն հայտնեց, մասնավորապես, սպանությունների և սպանության փորձերի դեպքերի աճի կապակցությամբ՝ հանձնարարելով դատախազական հսկողության գործիքակազմի կիրառմամբ ուշադրություն դարձել հատկապես օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով կանխարգելիչ գործողությունների ձեռնարկմանը, նախկինում կատարված հանցագործության դեպքերի հնարավոր շարունակության դրսևորումները բացահայտմանը:

Ա. Դավթյանն ընդգծեց հատկապես բնակարանային գողությունների դեպքերի նվազման միտումներում դատախազության դերակատարությունը: Դրա օրինակով հանձնարարվեց դատախազական ներգործության միջոցների կիարռմամբ կտրուկ մեծացնել քննչական գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետությունը, բազմապատկել տաք հետքերով հացնագործությունների բացահայտմանն ուղղված ցուցումներ և հանձնարարություններ տալու, հանցագործություններին նպաստող պատճառներն ու պայմանները վերացնելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու նպատակով պատկան մարմիններին միջնորդագրեր ներկայացնելու և դրացնով բարձրացված խնդիրների լուծման հարցում հետևողականություն ցուցաբերելու դատախազական ներգործության մեխանիզմների գործարկումը:

ՀՀ գլխավոր դատախազը անդրադարձավ ձերբակալության պրակտիկային՝ առանձնացնելով ձերբակալությունների արձանագրություններում դրա հիմքերը որոշ դեպքերում հստակ չներկայացնելու խնդիրը, ինչի արդյունքում երբեմն հնարավոր չի լինում դատավորների մոտ դրանց իրավաչափության համոզմունք ձևավորել: Ա. Դավթյանը միաժամանակ հանձնարարեց ընդգծված հետևողականություն դրսևորել նաև դատարանների կողմից ձերբակալությունները ոչ իրավաչափ ճանաչելու, ինչպես նաև կալանավորման միջնորդությունները մերժելու դատարանների որոշումների ուսումնասիրությանը: Դրանց բացարձակ անհիմն և ապօրինի լինելու իրողությունը վեր հանելու դեպքում, ըստ նրա, անհրաժեշտ է վերադասության կարգով բողոքարկելուց բացի քննարկել այդ որոշումները կայացրած դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը և անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ գլխավոր դատախազի՝ նման որոշումների արդյունքում երբեմն հանցագործությունների բացահայտման ուղությամբ քրեական հետապնդման մարմինների կատարած աշխատանքը «ջուրն է լցվում»:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին՝

Սպանության դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի քննության շրջանակներում պարտադիր կերպով վերհանել հանցագործության պատճառները և նպաստող պայմանները, դրանց վերացման նպատակով միջնորդագրեր ներկայացնել համապատասխան իրավասություն ունեցող պետական մարմնին կամ պաշտոնատար անձին: Միջնորդագրերի քննարկման արդյունքների և ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

2. ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին՝

1) Տասնօրյա ժամկետում ուսումնասիրել 2021 թվականի առաջին երեք ամիսների ընթացքում արձանագրված սպանության դեպքերի շարժընթացը, համեմատական վերլուծություն իրականացնել 2020 թվականի նույն ժամանակահատվածի հետ, վերհանել սպանության դեպքերի աճի պատճառները և նպաստող պայմանները, դրանց վերացման նպատակով անհրաժեշտ գործողությունների կատարման վերաբերյալ նախապատրաստել ՀՀ գլխավոր դատախազի հաղորդման նախագիծ՝ ուղղված ՀՀ ոստիկանության պետին,

2) Մինչև 2021 թվականի հունիսի 1-ը մշակել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քննվող քրեական գործերի քննության ընթացքում նյութական և դատավարական իրավունքի նորմերի կիրառման վերաբերյալ ուղեցույցի նախագիծ և ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին,

3) Մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը մշակել թրաֆիքինգի դեպքերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վերաբերյալ ուղեցույցի նախագիծ և ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

3. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազներին՝

Ապահովել, որ այն դեպքերում, երբ հանցագործության մասին հաղորդումը պարունակում է այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար են կոռուպցիոն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար, այսինքն բովանդակում են տեղեկություններ կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին, առանց ձգձգումների նյութեր նախապատրաստելու քրեադատավարական ընթացակարգի՝ անմիջապես հարուցվի քրեական գործ:

4. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի

օրինականության նկատմամբ հսկողության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազներին՝

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերով հարուցված քրեական գործերի շրջանակներում պարտադիր վերհանել թմրամիջոցի ապօրինի շրջանառության գործընթացին վերաբերող ամբողջական տեղեկատվությունը՝ ներգրավված անձանց շրջանակը, հանցավոր կապերի դրսևորումները, մաքսանենգ ճանապարհով ՀՀ թմրամիջոցների ներմուծման հիմնական ուղիները, դրան նպաստող պայմաններն ու պատճառները, դրանում կազմակերպված հանցավոր խմբերի ներգրավվածությունը, համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականներ ուղարկել իրավասու մարմիններին:

5. ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական հանցագործությունների գործերով վարչության պետին՝

Ակտիվացնել պայքարը տնտեսական հանցագործությունների դեմ, վերհանել տնտեսական հանցագործությունների պատճառները, նպաստող պայմաններն ու ընդհանուր օրինաչափությունները, դրանց վերացման վերաբերյալ համապատասխան միջնորդություններ ներկայացնել իրավասու մարմիններին: Ուսումնասիրել ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում քննվող գործերի չարդարացված ձգձգման դեպքերը, համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ տալ վարույթն իրականացնող մարմնին՝ քննության անհարկի ձգձգումները կանխելու նպատակով: Մինչև 2021 թվականի հունիսի 1-ը՝ արդյունքները համապատասխան զեկուցագրով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

6. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

1) Մինչև 2021 թվականի հունիսի 1-ը՝ ընտրանքային կարգով ուսումնասիրել ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների վերահսկողական գործառույթներն ավարտված, վարույթը կարճված և կասեցված 100-ական քրեական գործեր, պարզել նշված քրեական գործերով հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների և պայմանների վեր հանված լինելու, իրավասու մարմիններին միջնորդագրեր ներկայացված լինելու հանգամանքները, արդյունքները համապատասխան զեկուցագրով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2) ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտորի հետ համատեղ քննարկել կրիպտոարժույթների (բիթքոին, էթերիում և այլն) ներգրավմամբ կատարվող հանցագործություններին, հատկապես փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և այլ հանցագործությունների դեմ պայքարին վերաբերող դասընթացի ներառման անհրաժեշտության հարցը դատախազների վերապատրաստման ծրագրերում:

7. ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին՝

Մինչև 2021 թվականի հունիսի 1-ը մշակել բնակարանային գողությունների քննության մեթոդական ուղեցույց՝ հաշվի առնելով բնակարանային գողությունների դեպքերի առնչությամբ իրականացվող քննչական գործողություններին և օպերատիվ-հետախուզական միջոցառումներին վերաբերող պրակտիկան և լավագույն միջազգային փորձը:

8. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի դատախազին, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներին և դատախազին, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին (ըստ վերապահված գործառույթների շրջանակի)՝

Միասնական քրեաիրավական պրակտիկա ձևավորելու, հանցավորության դեմ պայքարն ակտիվացնելու նկատառումներով ապահովել հետևյալ ուղենիշների անշեղ և հետևողական կատարումը՝

1) Բացառել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ հաղորդումներին գրությամբ պատասխանելու կամ այլ կերպ անհետևանք թողնելու պրակտիկան: Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ հաղորդում ստանալիս անմիջապես գործադրել բոլոր միջոցները՝ պարզելու համար հաղորդումներում շարադրված տվյալների իսկությունը և արժանահավատությունը: Միաժամանակ անհրաժեշտ է բացառել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումների հիմնավորվածությունը գնահատելուն ուղղված միջոցների հապաղումը, իսկ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության՝ ընդհուպ դրանց նվազագույն հիմնավորվածության պայմաններում վարույթն իրականացնող մարմինների կողմից նյութերի նախապատրաստման ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու դեպքում մերժել այն՝ գրավոր ցուցում տալով քրեական գործ հարուցելու մասին,

2) Ձերբակալում դատավարական հարկադրանքի միջոց կիրառելիս ապահովել վարույթն իրականացնող մարմնի կողմից հետևյալ ուղենիշների անշեղ պահպանումը՝

ա) Բացառել այն դեպքերը երբ ենթադրյալ հանցանք կատարած անձինք մինչ ձերբակալվելը համապատասխան ծանուցագրերով հրավիրվել և պատշաճ ներկայացել են վարույթն իրականացնող մարմին, որից հետո ձերբակալվել են և որպես հիշյալ հարկադրանքի միջոցի կիրառման նպատակ մատնանշվել է <u>**նրանց փախուստը կանխելը**</u>: Նկատի ունենալ, որ, որպես կանոն, հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով անձը կարող է ձերբակալվել, երբ նա արգելանքի է վերցվում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց անմիջապես հետո, օրինակ՝ դեպքի վայրում կամ դրան հարակից տարածքներում,

բ) Բացառել հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից ձերբակալման հիմքերի կամ նպատակների բացակայության պայմաններում անձին ձերբակալելու պրակտիկան, իսկ ձերբակալման արձանագրությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից ստանալուց հետո՝ նմանատիպ խախտումներ հայտնաբերելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով սահմանված կարգով ձերբակալված անձին ազատել արգելանքից,

գ) Բացառել ձերբակալման արձանագրությունների ոչ պատշաճ և չփաստարկված կազմումը, մասնավորապես այն դեպքերը, երբ վարույթն իրականացնող մարմինները որպես ձերբակալման նպատակ վկայակոչում են անձի փախուստը կանխելը, մինչդեռ անձին արգելանքի վերցնելու պահին ձեռք բերված փաստական տվյալները փաստարկված վկայում են օրենքով նախատեսված այլ նպատակի մասին, այն է՝ առկա է եղել հիշյալ անձի կողմից նոր արարք կատարելու ռիսկը: Նման յուրաքանչյուր դեպքում նախաձեռնել արձանագրությունը կազմած պաշտոնատար անձի նկատմամբ ծառայողական քննություն: Հատուկ քննարկման առարկա դարձնել դատարանի կողմից ձերբակալումը ոչ իրավաչափ ճանաչելու յուրաքանչյուր դեպք, խախտում հայտնաբերելու դեպքում նախաձեռնել մեղավոր պաշտոնատար անձի

(հետաքննության կամ նախաքննության մարմնի աշխատակցի, դատավորի, դատախազի) ծառայողական քննություն:

3) Բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների դեպքերի ուսումնասիրության հիման վրա պատկան մարմիններին գրություններ հասցեագրել բազմաբնակարան շենքերի մուտքերի կահավորման անհրաժեշտության վերաբերյալ՝ դրանք հնարավոր քաղաքաշինական բարելավման ծրագրերում ներառելու նպատակով,

4) Հանցագործությունների բացահայտման վիճակի բարելավման նպատակով սեփականության դեմ ուղղված հանցագործություններով պարբերաբար, իսկ այլ գործերով ըստ անհրաժեշտության կազմակերպել իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների, դրանց իրացման ու դատավարականի փոխակերպման եղանակների աշխատանքային համատեղ քննարկումներ,

5) Եթե մեղադրական եզրակացությամբ ստացված գործի նյութերում առկա են փաստաթղթեր մեղադրյալի, պաշտպանի, ինչպես նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և նրանց ներկայացուցիչների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով միջնորդության և դա քննության առնելու մասին քննիչի որոշման վերաբերյալ, ապա նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ներկայացված պատշաճ բողոքը քննության առնել նույնիսկ այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը արդեն իսկ հաստատվել է և գործն ուղարկվել է դատարան,

6) Քրեական գործ հարուցելը մերժելու կամ վարույթը կարճելու մասին որոշումների դատական բողոքարկման արդյունքում դատարանների կողմից բողոքները բավարարելու դեպքում՝ համապատասխան դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, անհապաղ միջոցներ ձեռնարկել նախապատրաստված նյութերը կամ քրեական գործը ստանալու և քրեական գործ հարուցելու կամ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու ուղղությամբ,

7) Ուսումնասիրել 2020թ. հետախուզվողներին հայտնաբերելու ուղղությամբ կատարված աշխատանքները, վերհանել այն դեպքերը, երբ նախքան անձանց նկատմամբ հետախուզում հայտարարելը կայացվել են նրանց բերման ենթարկելու որոշումներ, որոնք չեն կատարվել, սակայն հետախուզում հայտարարելուց անմիջապես հետո հայտնաբերվել և ներկայացվել են նախաքննական մարմին և ուսումնասիրության արդյունքները ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական վերահսկողական և իրավական ապահովման վարչություն: Հետագա աշխատանքում այդօրինակ դեպքեր հայտնաբերելու և խախտումներ արձանագրելու դեպքում կիրառել դատախազական ներգործության համապատասխան միջոցներ,

8) Անհրաժեշտ հետևողականություն ցուցաբերել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունները պատշաճ ժամկետում ստանալու ուղղությամբ, ապահովել դրանց մանրամասն ուսումնասիրությունը, հիմնավորվածության և օրինականության ստուգումը,

9) Քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնելիս ապահովել քրեական գործերի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելուն ուղղված պատշաճ ջանասիրությունը՝ այդ գործերով հատկապես անձանց կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս պատշաճ հիմնավորումներ ներկայացնելու անհրաժեշտության հաշվառմամբ,

10) Սեփականության, տնտեսական գործունեության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործություններով պարտադիր, այլ գործերով՝ ըստ անհրաժեշտության սեղմ ժամկետում ուսումնասիրել փորձաքննություններ նշանակելու մասին որոշումները՝ բացառելով

գործով առգրավված փաստաթղթերն անհրաժեշտության դեպքում զննված չլինելու պայմաններում, հախուռն փորձագետին տրամադրելու և վերջինիս իր իրավասությունից դուրս, վերացական ու ընդհանրական հարցեր առաջադրելու դեպքերը,

11) Նախապատրաստված նյութերը և քրեական գործերը հետաքննության մարմնից քննիչին հանձնելու դեպքերում նկատի ունենալ հետևյալ կանոնները.

ա/ Հետաքննության մարմինն իր կողմից նախապատրաստվող նյութերը նախաքննության մարմնին կարող է փոխանցել միայն դատախազի հանձնարարությամբ՝ այն գրությամբ ուղարկելով քննչական մարմնի պետին և դրանում նշելով, որ նյութերը փոխանցում է դատախազի հանձնարարությամբ:

բ/ Հետաքննության մարմինը հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելու որոշմամբ այն կարող է ուղարկել բացառապես այլ տարածքի հետաքննության մարմնին:

գ/ Քրեական գործը, հետաքննության տասնօրյա ժամկետն ավարտվելուց հետո հետաքննության մարմնի կողմից ուղարկվում է նախաքննության մարմնին՝ կայացնելով քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշում, որը հաստատվում է հետաքննության մարմնի պետի կողմից:

դ/ Մինչև հետաքննության ժամկետը լրանալը հանցանք կատարած անձի ի հայտ գալու դեպքում քրեական գործը հետաքննության մարմնի կողմից ուղարկվում է նախաքննության մարմնին՝ կայացնելով քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշում, որը հաստատվում է հետաքննության մարմնի պետի կողմից:

ե/ Քրեական գործը քննիչին հանձնելու մասին դատախազի հանձնարարության դեպքում հետաքննության մարմինը այն գրությամբ ուղարկում է նախաքննության մարմնին՝ նշելով, որ քրեական գործն ուղարկվում է այն քննիչին հանձնելու մասին դատախազի հանձնարարությամբ:

զ/ Քննիչի կողմից գործի քննությանը ներգրավվելու դեպքում, հետաքննության մարմինը այն գրությամբ ուղարկում է նախաքննության մարմնին՝ որպես գործը քննիչին հանձնելու հիմք նշելով քննությանը քննիչի ներգրավվելը:

12) Քրեական գործերի ենթակայության կանոնի կիրառման հարցում հիմք ընդունել հետևյալ մոտեցումները.

ա/ Քննչական վարչության /բաժնի/ պետը կոնկրետ վարչության /բաժնի/ տարածքում կատարված հանցագործության վերաբերյալ գործը կարող է վերցնել քննիչից և հանձնարարել բացառապես նույն քննչական վարչության /բաժնի/ քննիչին,

բ/ Իրավասու քննչական բաժնի պետը կոնկրետ քննչական բաժնի տարածքում կատարված հանցագործության վերաբերյալ քրեական գործը կարող է վերցնել քննիչից և հանձնել այլ քննչական բաժնի քննիչի բացառապես այդպիսի դատավարական անհրաժեշտություն ենթադրող այն դեպքերում, երբ քննչական ենթակայության կանոնները կիրառելի չեն (օրինակ՝ քրեական գործերը միացնելու անհրաժեշտության դեպքում),

գ/ Քրեական գործը քննչական ենթակայության որևէ կանոնին համապատասխան այլ քննիչի ուղարկելու անհրաժեշտության դեպքում քննիչը պարտավոր է կայացնել քրեական գործն ըստ ենթակայության ուղարկելու մասին որոշում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քննչական ենթակայությունը որոշելու բացառիկ լիազորությունը վերապահված է դատախազին,

13) Առերեսում կատարելու հիմքերի առկայության դեպքում բացառել տակտիկական նկատառումներով դրանք նախաքննության փուլում չկատարելու դեպքերը՝ ապահովելով առերեսման ժամանակ հարցաքննվողներին տակտիկապես մշակված և իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ տալու հանգամանքը վեր հանող հարցադրումներ տալը,

14) Ապահովել, որպեսզի քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացվելու դեպքում անձի գույքի վրա դրված կալանքը փաստացի վերացվի, իսկ գույքի վրա դրված կալանքը քրեական վարույթն ավարտվելուց հետո դատավճռով պահպանվելու դեպքում նախքան հսկողական վարույթներն արխիվացնելը պարզել օրենքով սահմանված ժամկետի ավարտին գույքն արգելանքից հանված լինելու հանգամանքը՝ այն հանված չլինելու դեպքում ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ,

15) Քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնելիս անհրաժեշտ դատավարական միջոցներ ձեռնարկել ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածով նախատեսված գույքի շրջանակը պարզելու ուղղությամբ, իսկ մեղադրական ճառում միջնորդել դրանք օրենքով սահմանված կարգով բռնագանձել հօգուտ պետության,

16) Հափշտակության, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում պարտադիր քննարկման առարկա դարձնել փողերի լվացման, այլ պետություն մուտքը կամ այնտեղ գտնվելն ապահովելու համար գումար ստանալու և խաբեությամբ հափշտակելու դեպքերով մինչդատական վարույթի շրջանակներում՝ ապօրինի միգրացիա կազմակերպելու, իսկ վարկավորմանն օժանդակելու տարբեր մեխանիզմերով հափշտակության դեպքերի քննության շրջանակներում՝ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելով վաշխառություն կատարելու հնարավոր հանգամանքները,

17) Վիճելի հարաբերությունների քաղաքացիաիրավական բնույթի պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներում բացառել այդ հարաբերությունների բովանդակությունը կազմող, այդ թվում՝ փոխադարձ պարտավորությունների առկայության փաստը, դրանց չափերը հաստատող ձևակերպումները,

18) Անձին պատկանող գույքը գործարքի կամ կեղծիքի արդյունքում վերցնելու և մեկ ուրիշի իրացնելու մեխանիզմով կատարված խարդախությունների (քաղաքացիաիրավական հարաբերությունների ակնհայտ բացակայության և անձին առերևույթ վնաս պատճառված լինելու) դեպքում տուժող ճանաչել ինչպես գույքի սկզբնական սեփականատիրոջը, այնպես էլ այն անձին, ում խաբեությամբ իրացվել է գույքը՝ անձին առաջադրված մեղադրանքում նկարագրելով նաև սեփականատիրոջից գույքը վերցնելու հանգամանքը,

19) Այլ պետություններում բնակվող անձանց կողմից ՀՀ-ում արգելված, իսկ այդ պետությունում ազատ վաճառքի ենթակա թմրամիջոցներ առաքելու դեպքերի քննության ընթացքում նկատի ունենալ, որ տվյալ դեպքում կիրառելի է «օրենքի չիմացությունը չի ազատում քրեական պատասխանատվությունից» հանրահռչակ սկզբունքը, իսկ իրավական որոշակիության սկզբունքի հետ դրա հարաբերակցությունը ենթադրում է, որ որոշակի, այդ թվում՝ իր բնակության պետությունից դուրս վարքագիծ դրսևորող ցանկացած անձ պարտավոր է հավաստիանալ իր վարքագծի թույլատրելիության մեջ՝ հանրամատչելի իրավական ակտերի ուսումնասիրությամբ,

20) Նկատի ունենալ, որ գույքը հափշտակելուց հետո հափշտակության առարկան վնասելու դեպքում արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով առանձին որակվել և գույքի նույն արժեքը կամ դրա մի մասը անձին կրկնակի մեղսագրվել չի կարող,

21) Գործնականում առաջնորդվել այն մոտեցմամբ, որ չի կարող տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված, այդ իրավունքը կասեցված կամ այդպիսի իրավունք չունեցող անձին մեղսագրվել ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցի վարում այն դեպքերում, երբ քրեական գործով չի հաստատվել այդ վիճակում տրանսպորտային միջոց

վարելու փաստը, այլ միայն պարզվել է, որ անձի մոտ ոչ սթափության վիճակն ի հայտ է եկել տրանսպորտային միջոց վարելուց հետո ալկոհոլային խմիչք, թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ օգտագործելու հետևանքով՝ չնայած այն հանգամանքին, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 126-րդ հոդվածի 9-րդ մասի իմաստով վերջին դեպքում անձը համարվում է ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարած,

22) Գործնականում առաջնորդվել այն դիրքորոշմամբ, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված՝ վարորդական իրավունքը դադարեցնելու հիմքերով վարորդական վկայականն ուժը կորցնելու փաստն իրավական հետևանքների առումով հավասարազոր դիտել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունենալուն,

23) ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով քննվող քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս հետևել, որպեսզի վարույթն իրականացնող մարմնի կողմից պարզվի սթափության վիճակի ստուգման սարքի ստուգաչափում անցած լինելու հանգամանքը, ինչպես նաև անձի արարքին քրեաիրավական գնահատական տալիս հաշվի առնվեն ալկոհոլի պարունակությունը ստուգաչափող սարքերի չափման տոկոսային շեղումները՝ արձանագրված պարունակությունից համապատասխանորեն հաշվանցելով շեղման տոկոսային չափը՝ մեղադրանքի որոշակիությունն ապահովելու նպատակով,

24) Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոցը մեկ միասնական դիտավորությամբ մի քանի անգամ, այդ թվում՝ տարբեր օրերի վարելը դիտարկել շարունակվող հանցագործության մաս կազմող նույնական արարքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ անձն արարքը կատարում է առաջին արարքի համար դատապարտվելուց հետո,

25) Այն դեպքերում, երբ անձը ծանուցվել է վարորդական իրավունքից զրկելու, վարորդական իրավունքը կասեցնելու վարչական որոշման մասին և այն չի ստացել, պատշաճ քննության առարկա դարձնել չստանալու հանգամանքները, ծանուցումը ստանալու օբյեկտիվ հնարավորությունը: Միաժամանակ, եթե քննության արդյունքներով պարզվի, որ անձը չի ստացել ծանուցումը, չի ծանոթացել նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում դրա վերաբերյալ հրապարակմանը, ապա նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ նկատի ունենալով, որ նման իրավիճակներում բացակայում է արարքը կատարած անձի դիտավորությունը, հետևաբար նաև՝ մեղքը,

26) Քրեական գործերով մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց պատկանող գույքի վրա կալանք դնելու մասին որոշումները կայացնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ գլխով նախատեսված պահանջների խախտումները բացառելու նպատակով ապահովել հետևյալը.

ա) քրեական գործերով կասկածյալի կամ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու անհրաժեշտության դեպքում պարզել վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող գույքերի շրջանակը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գույքի առկայության դեպքում կալանք դնել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի բաժնեմասի վրա,

բ) գույքի վրա կալանք դնելու մասին որոշումներում հստակ տարանջատել որոշման կայացման դատավարական հիմքն ու նպատակը, ինչպես նաև փաստարկված

դատողություններ ներկայացնել գույքը տիրապետողի կողմից թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական ռիսկերը գնահատելու վերաբերյալ,

գ) միջոցներ ձեռնարկել կալանադրվող գույքի շուկայական արժեքը պարզելու ուղղությամբ /ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 749-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կադաստրի կոմիտեի կանոնադրության 3-րդ բաժնի 7-րդ կետի համաձայն՝ Կադաստրի կոմիտեի գործառույթներից է հանդիսանում անշարժ գույքի պետական համակարգված դիտարկումների (մոնիթորինգ) կազմակերպումն ու իրականացումը, անշարժ գույքի շուկայի վերլուծությունը և տեղեկատվության հրապարակումը: Նշված գործառույթի՝ անշարժ գույքի շուկայի վերլուծության իրականացումն ապահովվում է հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները, որի արդյունքում մշակվում և հասանելի աղբյուրներում հրապարակվում են ՀՀ ամբողջ տարածքում՝ ըստ գոտիականության, անշարժ գույքի միջինացված շուկայական արժեքները/ եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով/,

դ) գույքի վրա կալանք դնելու մասին որոշում կայացնելիս պարտադիր նշել կալանադրվող գույքը՝ անհատականացնող տվյալներով (անշարժ գույքի դեպքում՝ կադաստրային ծածկագիր, սեփականատեր, սեփականության իրավունքի տեսակ, հասցե, չափաբանական և այլ տվյալներ, շարժական գույքի դեպքում՝ մակնիշ, հաշվառման համարանիշ, նույնականացման համարանիշ և այլն), ինչպես նաև գույքի այն արժեքը, որի վրա բավական է կալանք դնել՝ քաղաքացիական հայցը և դատական ծախսերն ապահովելու համար,

ե) գույքը կալանքից ազատելու անհրաժեշտության դեպքում այդ մասին կայացնել համապատասխան որոշում,

զ) Որպես կալանադրման ենթակա գույք դիտարկել նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից հանցագործության առարկա հանդիսացող արտահանվող կամ ներմուծվող ապրանքները՝ խստիվ հետևելով տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հնարավոր դրսևորումներին՝ թույլ չտալով որևէ անհարկի միջամտություն այդ գործընթացին:

Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ որպես կասկածյալ կամ մեղադրյալ դատավարական կարգավիճակ ունեցող անձինք ունեն այլ անշարժ կամ շարժական գույք՝ ձեռնպահ մնալ տնտեսական գործունեության առարկա հանդիսացող ապրանքների վրա կալանք դնելուց,

27) 50 և ավել տոկոս պետական կամ համայնքային բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն հանցագործությունների փաստի առթիվ հարուցված քրեական գործերով կազմակերպությունների ղեկավար անձանց արարքները քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված «պաշտոնատար անձ» հասկացության համատեքստում,

28) Բոլոր այն դեպքերում, երբ հսկողական և վերահսկողական լիազորություններ իրականացնելիս ի հայտ են գալիս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բ) ենթակետի իմաստով անձին պատկանող գույքի առկայության վերաբերյալ տվյալներ (այսինքն՝ երբ գույքը սեփականության իրավունքով թեև պատկանում է այլ անձի, սակայն կոնկրետ գույքի իրական շահառու է հանդիսանում այն անձը, ում գույքի վերաբերյալ ուսումնասիրություն է իրականացվում ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում), համապատասխան տեղեկություններ պարունակող նյութերը տրամադրել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանը,

29) Արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում, դատավճռի հետ միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչություն ուղարկել մեղադրողի մեղադրական ճառի տեքստը, իսկ ՀՀ գլխավոր դատախազության անմիջական հսկողության գործառույթներ իրականացնող վարչությունների դեպքում՝ ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ Ա.ԴԱՎԹՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ